

ՊՏՐԻ ԿԵՆՍԱՊԱՀՅՈՎԱԿԱՆ ՆՈՐ ՏՐՈՊՈՏՐՈՊ ՄԵԽԱՆԻԶՄԸ

ԼԱԽՆՈ Ի.Վ.

Խարկովի հետդիպլոմային կրթության բժշկական ակադեմիա, Խարկով, Ուկրաինա

Հանձնված է՝ 12/08/2013թ., ընդունված է՝ 12/01/2014թ.

Ութսունհինգ կանանց հղիության 37-41 շաբաթվա շրջանում ուսումնասիրվել է մոր և պտղի սրտային ռիթմի և պորտալարի երակի արյան հոսքի փոփոխականության սպեկտրալ բնութագրերը: Նրանցից 63-ի մոտ եղել է նախաէկլամպսիա: Նախաէկլամպսիայի զարգացումն ուղեկցվել է վազո-հնսուլյար օղակի ակտիվության կարգավորման իջեցմամբ: 2,0-ից բարձր սիմպատոլագալ հավասարակշռությունը եղել է հղիության այդ բարդության ցուցանիշ: Սիմպատո-ադրենալանային ազդեցությունների գերակշռությունը մոր մոտ հանգեցրել է սիրտ-անոթային համակարգի հարմարվողականության բացակայության, որը դրսևորվել է վազոկոնստրիկտորների նկատմամբ տուլերանտությամբ և հղիության հիպերվոլեմիայի կայունությամբ:

Հաստատված է, որ նախաէկլամպսիայով պացիենտների մոտ պտղի վիճակի վատացումն ուղեկցվել է սպեկտրի ընդհանուր հզորության և սրտի ռիթմի փոփոխականության բոլոր ֆրակտալ բաղադրիչների համեմատական գերակշռության կենտրոնական սիմպատիկ ուղղության շրջանի իջեցմամբ:

Ծանր աստիճանով նախաէկլամպսիայով պացիենտների մոտ պտղի սրտային ռիթմի պարբերական դանդաղման առաջացումը հիմք է ծառայել հաստատելու, որ նախածննդյան դեցելերացիայի պայթոզներում նշանակալի դեր է խաղացել կենտրոնական սիմպատիկ շրջանի ռեգուլացիայի գերակայությունը՝ պտղի միոկարդի հիպոկսիկ վնասվածքի ձևավորման առկայության դեպքում և սինուսային հանգույցի ճնշման պատասխանում:

Ֆիզիոլոգիական հղիության ընթացքով պացիենտների մոտ պորտալարի ֆլեբոհեմոդինամիկայի ֆազային պատկերի կառուցման ընթացքում հայտնաբերվել է ավելի քան 2 ավելի վառ արտահայտված պիկեր:

Առաջին պիկը համապատասխանել է պտղի սրտի կրճատման հաճախականությանը, իսկ երկրորդը, հավանաբար, պայմանավորված է եղել պորտալարի երակի հարթմանային շերտի կծկման ակտիվությամբ:

Նախաէկլամպսիայով ծանր խմբում պորտալարի երակում արյան հոսքի սինխրոնիզացիան մայրական արյան շրջանառությամբ ավելի է մեծացել: 0,5 Հց շրջանում պիկի ամպլիտուդան կազմել է 0,14±0,01 պայմանական միավոր:

Պտղի ավտոնոմ նյարդային կարգավորման մակարդակի իջեցումը ցույց է տվել մայրական հեմոդինամիկայից անկախության կորուստ, որը սինխրոնացրել է մոր և մանկան սրտի ռիթմը՝ վազալ (թափառող) տոնի հզորության ավելացման հաշվին:

Պտղի դիսսթրեսի զարգացմանը զուգընթաց նկատվել է մայրական ծագման դանդաղալիքային պրոցեսների դերի մեծացում՝ սեփական ֆլեբոտոնիկ մեխանիզմների հյուծմամբ, պորտալարի ֆլեբոհեմոդինամիկայի կարգավորումում, որը պորտալարի երակում ուժեղացրել է պուլսիացիոն ալիքի անցկացումը:

Պորտալարի ֆլեբոհեմոդինամիկայի պրոցեսում մայրական ազդեցության դոմինացումն եղել է կարճաժամկետ և քիչ արդյունավետ կոմպենսատորային-հարմարվողական ռեակցիա:

Այդ դեպքում 7 Հց հաճախականությամբ պիկը բացակայել է:

Դա բնութագրել է երակների ակտիվության սեփական կծկողականության հյուծում և զարկերակային պատտերնով ուղեկցվող արյան հոսքի ի հայտ գալով: